



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 օգոստոսի 2014 թվականի N 927 - Ա

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՓՈԽԱ-
ՆԱԿՄԱՆ, ՈՐՊԵՄ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ,
ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ԵՎ
«ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱԹՈԼՈԳՈԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ
ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի
594-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 65-րդ, 71-րդ և 89-րդ հոդվածներով
և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ
հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի
կառավարման վարչության տնօրինության՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի քաղաքի Չայկովսկու 6 հասցեում գտնվող՝ 0,431104 հեկտար մակերեսով հողա-
մասը (այսուհետ՝ գույք-1) հետ վերցնել և ամրացնել «Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի
կառավարման վարչության պետին և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպե-

տին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում իրականացնել գույք-1-ի հանձնման-ընդունման աշխատանքները:

3. Ռուբիկ Գասպարյանին և Ջյունիկ Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Գյումրի քաղաքի Գ. Նժդեհի 1/6 հասցեում գտնվող՝ 2296800 դրամ կադաստրային արժեքով, 0,12 հեկտար մակերեսով հողամասը (այսուհետ՝ գույք-2) փոխանակել Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Գյումրի քաղաքի Չայկովսկու 6 հասցեում գտնվող՝ 0,431104 հեկտար մակերեսով հողամասից առանձնացված 0,17 հեկտար մակերեսով, 3253800 դրամ կադաստրային արժեքով հողամասի հետ (այսուհետ՝ գույք-3):

4. Առաջարկել Գյումրու քաղաքապետին սահմանված կարգով ապահովել գույք-2-ի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության իրականացումը՝ բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողի կատեգորիայի:

5. Որպես նվիրատվություն ընդունել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ Գյումրի քաղաքի Գ.Նժդեհի 1/7 հասցեում գտնվող՝ 3263618,82 դրամ կադաստրային արժեքով, 0,170513 հեկտար մակերեսով հողամասը (այսուհետ՝ գույք-4) և Գյումրի քաղաքի Գ.Նժդեհի 3/9 հասցեում գտնվող՝ 558964,56 դրամ կադաստրային արժեքով, 0,029204 հեկտար մակերեսով հողամասը (այսուհետ՝ գույք-5)՝ որպես պետական սեփականություն:

6. Գյումրի քաղաքի Գ. Նժդեհի 1/6 հասցեում գտնվող՝ 2296800 դրամ կադաստրային արժեքով, 0,12 հեկտար մակերեսով հողամասը (այսուհետ՝ գույք-2), Գյումրի քաղաքի Գ.Նժդեհի 1/7 հասցեում գտնվող՝ 3263618,82 դրամ կադաստրային արժեքով, 0,170513 հեկտար մակերեսով հողամասը (այսուհետ՝ գույք-4), Գյումրի քաղաքի Գ.Նժդեհի փողոցի 3/9 հասցեում գտնվող՝ 558964,56 դրամ կադաստրային արժեքով, 0,029204 հեկտար մակերեսով հողամասը (այսուհետ՝ գույք-5), Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Գյումրի քաղաքի Չայկովսկու 6 հասցեում գտնվող՝

0,431104 հեկտար մակերեսով հողամասից առանձնացված՝ 2871000 դրամ կադաստրային արժեքով, 0,15 հեկտար մակերեսով հողամասը (այսուհետ՝ գույք-6) ներդնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում՝ այդ գույքի արժեքի չափով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ավելացնելով ընկերության կանոնադրական կապիտալը՝ լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու միջոցով:

7. Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Գյումրի քաղաքի Չայկովսկու 6 հասցեում գտնվող՝ 0,431104 հեկտար մակերեսով հողամասից առանձնացված՝ 0,1065 հեկտար մակերեսով հողամասը (այսուհետ՝ գույք-7) նվիրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքին՝ Գյումրի քաղաքի Չայկովսկու 6/2 հասցեում գտնվող շենքի սպասարկման համար:

8. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել՝

1) Ռուբիկ Գասպարյանի և Ջյունիկ Գասպարյանի հետ Հայաստանի Հանրապետության անունից գույք-2-ի և գույք-3-ի փոխանակման պայմանագրի կնքումը, հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը և գույքային իրավունքների պետական գրանցումը.

2) Գյումրու քաղաքապետի հետ Հայաստանի Հանրապետության անունից գույք-4-ի, գույք-5-ի և գույք-7-ի նվիրատվության պայմանագրերի կնքումը, հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը և գույքային իրավունքների պետական գրանցումը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված աշխատանքների ավարտից հետո՝ գույք-2-ի, գույք-4-ի, գույք-5-ի և գույք-6-ի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը և գույքային իրավունքների պետական գրանցումը՝ ընկերության միջոցների հաշվին.

4) «Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը, կանոնադրության մեջ համապատասխան փոփոխության կատարումը և գրանցումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2014 թ. սեպտեմբերի 8
Երևան

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

